

## ՏԵՂԵԿԱՅՈՒՄ

### ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Սարչապետ	Ավագանու արտահերթ նիստ	18.05.2020թ.	12:00	Սարչապետի համայնքապետարանի վարչական շենք, ավագանու նստավայր (ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, փ.1, շենք 67)

## Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2020թ. մայիսի 18-ին՝ ժամը 12.00-ին Սարչապետի համայնքապետարանի նիստերի դահլիճում կայանալիք համայնքի ավագանու արտահերթ նիստի

**գ.Սարչապետ**

**15.05.2020թ.**

1. <<Արևային ֆոտովոլտային կայանի կառուցում>> դրամաշնորհային ծրագրին և ներդրմանը համաձայնություն տալու մասին: (Ձեկ. Ա.Մարտիրոսյան)
2. Սարչապետ համայնքի սեփականություն հանդիսացող արոտավայրերից և խոտհարքերից օգտվելու վճարի չափը և կարգը սահմանելու մասին: (Ձեկ. Ա.Մարտիրոսյան)

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ  
ՄԱՅԻՍԻ 18-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ  
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

/Զեկ. ԱՆԺԵԼԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի  
Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝

**ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.**

1. Հաստատել Սարչապետ համայնքի ավագանու 2020 թվականի մայիսի  
18-ի թիվ 06 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը՝

1) <<Արևային ֆոտովոլտային կայանի կառուցում>> դրամաշնորհային  
ծրագրին և ներդրմանը համաձայնություն տալու մասին: (Զեկ.  
Ա.Մարտիրոսյան)

2) Սարչապետ համայնքի սեփականություն հանդիսացող  
արոտավայրերից և խոտհարքերից օգտվելու վճարի չափը և կարգը  
սահմանելու մասին: (Զեկ. Ա.Մարտիրոսյան)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

## ՆԱԽԱԳԻԾ

<<ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ  
ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ >>  
ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ԵՎ  
ՆԵՐԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ  
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԺԵԼԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ  
հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝

### ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

- Տալ համաձայնություն <<Արևային ֆոտովոլտային կայանի ցանկապատում>>  
դրամաշնորհային ծրագրին՝ համաձայն հավելված 1-ի:
- Հաստատել ծրագրում սեփական ներդրման չափը՝ համաձայն հավելված 2-ի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

**ՄԻՋՈՒՆՈՒՄԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅՏ ԳՐԵԼՈՒ ՈՒՂԵՆԻՇ**

**I. Տիտղոսաթերթ (1 էջ)**

Ծրագրի անվանումը.	Արևային ֆոտովոլտային կայանի կառուցում	
Ծրագրի ղեկավար.	Բորիս Բարոյան	
Ծրագրի իրականացման վայր. թիրախ համայնք /բնակավայր/եր/, մարզ.	ՀՀ, Լոռու մարզ, Սարչապետ համայնք, Սարչապետ բնակավայր	
Ծրագրի տևողությունը՝ ամիսներով.	3-8 ամիս	
Ծրագրի ընդհանուր բյուջեն /ՀՀ դրամ/.	8 401 000	
«Հայկական Կարիտաս»-ից հայցվող դրամաշնորհ /ՀՀ դրամ/.	5 050 000	
Ծրագրի ընդհանուր ներդրում /ՀՀ դրամ/.	Ֆինանսական	Ոչ ֆինանսական
	1 851 000	1 500 000
Ծրագրի ներկայացման ամսաթիվ.	18.05.2020	

**II. Հայտատուների մասին տեղեկատվություն**

**Հայտադրու 1 (Գլխավոր).**

Անվանում.	Սարչապետի համայնքապետարան
Պաշտոնատար անձը, պաշտոնը.	Բորիս Բարոյան, համայնքի ղեկավար
Կոնտակտային տվյալներ. հասցե, հեռախոս, էլ. հասցե.	ՀՀ, Լոռու մարզ, Սարչապետ համայնք, Սարչապետ բնակավայր, փ.1, շենք 67, հեռ.՝093678862, աշխ.՝077867459, ssarchapet@mail.ru

Վեբ կայք, սոցիալական մեդիա	sarchapet.am	
Գրանցման տարեթիվ.	08.12.2017	
Պետական գրանցման համարանիշ.	26.110.932746	
Բանկային Հ/Հ.	900272272015	
Գործունեության ոլորտ.	Տեղական ինքնակառավարման մարմին	
Աշխատողների թիվը.	30	
Կամավորների թիվը (միայն ՔՀԿ-ների դեպքում).	-	
Հայտատու 1. Բյուջե /ՀՀ դրամ/.	6 207 000	
Հայտատու 1. Ակնկալվող դրամաշնորհ /ՀՀ դրամ/.	4 800 000	
Հայտատու 1. ներդրումը /ՀՀ դրամ/.	Ֆինանսական	Ոչ ֆինանսական
	1 407 000	1 500 000
<b>Ընդհանուր տեղեկություններ համայնքային զարգացման ոլորտում փորձառության մասին.</b>		
<p>Ներկայացնել տեղեկատվություն՝ առկայության դեպքում մեջբերելով հղումներ.</p> <ul style="list-style-type: none"> <li>- ՏԻՄ-ի համար. ՔՀԿ-ների, միջազգային կազմակերպությունների հետ կամ այլ համագործակցության մասին.</li> </ul> <p>Համալրել իրականացվել են՝</p> <p>2020 թ.- &lt;&lt;Միջհամայնքային համագործակցություն՝ աղբավայրի ցանկապատում&gt;&gt; դրամաշնորհային ծրագիր <a href="http://192.168.1.2/Pages/DocFlow/Default.aspx?a=v&amp;g=c25ca3b2-5f5e-4f39-b65c-7636e0db1a9d">http://192.168.1.2/Pages/DocFlow/Default.aspx?a=v&amp;g=c25ca3b2-5f5e-4f39-b65c-7636e0db1a9d</a>, Սարչապետ-Տաշիր-Մեծավան-Եվրոպայի խորհուրդ, ծրագրի արժեքը՝ 12 450 000 ՀՀ դրամ,</p> <p>2019թ.- &lt;&lt;Սարչապետ համայնքի գյուղատնտեսության զարգացման աջակցություն և կոմունալ ծառայությունների բարելավում&gt;&gt;՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ-համայնք, ծրագրի արժեքը՝ 154 900 000 ՀՀ դրամ,</p> <p>2019թ.- Սարչապետ համայնքի արոտավայրերի բարելավում, անասնաբուժական կետերի հիմնում՝ &lt;&lt;Ռազմավարական զարգացման գործակալություն&gt;&gt; ՀԿ –համայնք, ծրագրի արժեքը՝ 16 387 000:</p>		

**Հայտարարու 2.**

Անվանում.	<<ԷՅԴ ԶԻ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ	
Պաշտոնատար անձը, պաշտոնը.	Հարություն Համլետի Դանիելյան	
Կոնտակտային տվյալներ. հասցե, հեռախոս, էլ. հասցե.	ՀՀ, Լոռու մարզ, ք.Վանաձոր, Խորենացու փ., 2.7, 13., հեռ.՝077878744, hovdanielyan@mail.ru	
Վեբ կայք, սոցիալական մեդիա	-	
Գրանցման տարեթիվ.	01.11.2016	
Պետական գրանցման համարանիշ.	26.110.932746	
Բանկային Հ/Հ.	1570057739550100	
Գործունեության ոլորտ.	Միջնորդական ծառայություն	
Աշխատողների թիվը.	3	
Կամավորների թիվը (միայն ՔՀԿ-ների դեպքում).		
Հայտատու 2. Բյուջե /ՀՀ դրամ/.	694 000	
Հայտատու 2. Ակնկալվող դրամաշնորհ /ՀՀ դրամ/.	250 000	
Հայտատու 2. ներդրումը /ՀՀ դրամ/.	Ֆինանսական	Ոչ ֆինանսական
	444 000	0
<b>Ընդհանուր տեղեկություններ համայնքային զարգացման ոլորտում փորձառության մասին.</b>		
<p>Ներկայացնել տեղեկատվություն՝ առկայության դեպքում մեջբերելով հղումներ.</p> <ul style="list-style-type: none"> <li>- Գործարարների համար. Սոցիալական պատասխանատվության փորձի առկայության մասին: <ul style="list-style-type: none"> <li>• &lt;&lt;Նվիրիր երազանք&gt;&gt; սոցիալական ծրագրին անհատույց տրամադրվել է փոխադրամիջոց ծրագրի շրջանակներում փոխադրումներ կազմակերպելու համար:</li> <li>• Սոցիալական զբաղվածության գործակալության հետ համատեղ իրականացվել է խրախուսական ծրագիր՝ զբաղվածությունում գրանցված գործազուրկներին աշխատանքի տեղավորելու դեպքում գործատուներին տրամադրվել է հանգստյան տուրիստական փաթեթներ:</li> </ul> </li> </ul> <p>COVID-19 դեմ պայքարի միջոցառումների շրջանակներում սոցիալապես անապահով ընդհանրիքներին տրամադրվել է սոցիալական օգնություն (սննդի և տնտ. պարագաների տեսքով):</p>		

### III. Հիմնախնդրի ձևակերպում

Առաջարկվող ծրագրի հիմքում ընկած կարիքը, որն անհրաժեշտ է ձևակերպել որպես համայնքային հիմնախնդիր:

Այս բաժնում անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ տեղեկությունները.

Թիրախ համայնքի, թիրախ բնակավայր/եր/ի նկարագրություն՝ համառոտ պատմություն, վիճակագրություն:

Սարչապետ համայնքը գտնվում է Լոռու մարզի Տաշիրի տարածաշրջանում, Տաշիր քաղաքից 16 կմ հյուսիս-արևելք, մարզկենտրոնից 68 կմ հեռավորության վրա, իսկ մայրաքաղաքից՝ 176 կմ:  
Համայնքը սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը: Բարձրությունը ծովի մակարդակից 1705 մ է: Սարչապետ համայնքը կազմավորվել է 19-րդ դարի 20-30-ական թվականներին:  
Բնակչության հիմնական մասը գաղթել է Արևմտյան Հայաստանի Մուշից, Ալաշկերտ գավառի Մոլեման գյուղից, որտեղից էլ տեղահանվել են 1826-1828թթ. Ռուս-Պարսկական պատերազմի օրերին: Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ, սակայն եկամտի հիմնական աղբյուրն շարունակում է մնալ արտագնա աշխատանքը:  
Սարչապետ բազմաբնակավայր համայնքը կազմավորվել է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ 2017 թվականի հունիսի 9-ի ՀՕ - 93-Ն օրենքի համաձայն և 2017 թ. նոյեմբեր 5-ին կայացած ՏԻՄ ընտրությունների արդյունքում՝ թվով 8 համայնքների միավորումով: Համայնքի կազմում ընդգրկված են հետևյալ բնակավայրերը՝ Սարչապետ, Նորաշեն, Պրիվոլնոյե, Պետրովկա, Արծնի, Ապավեն, Ձորամուտ, Գոգավան: Բնակչության թիվը՝ 6021: Տնային տնտեսությունների թիվը՝ 1671:

Հիմնախնդրի մասին վկայող հիմնավորում՝ հետազոտական կամ այլ վերլուծական աղբյուրը:

1. Սարչապետ համայնքի ՀՀ Տարեկան աշխատանքային պլան 2020թ.

<http://192.168.1.2/Pages/DocFlow/Def.aspx?nt=1&a=v&g=1bc49ac2-a7c9-49c0-b0fd-0b0fa2efa3da>

2. Տարեկան հաշվետվություն Սարչապետ համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ: <http://192.168.1.2/Pages/DocFlow/Def.aspx?a=v&g=daaa7d2c-cabc-458e-9413-c8550635e952>

Հիմնախնդրի նկարագրությունը, պատճառները, հետևանքները: Հիմնախնդրի լուծման կարևորությունը, հրատապությունը:

Էներգետիկ ծառայությունը Սարչապետ համայնքի բյուջեի մեծ ծախսերից է՝ տարեկան 7.5-8.5 մլն ՀՀ դրամ, որը առաջանում է ութ բնակավայրերում գիշերային լուսավորության ապահովման, վարչական շենքերի սպասարկման և վարչական ղեկավարների նստավայրերի ջեռուցման արդյունքում: Համայնքի սուղ բյուջեի համար շատ բացասական ազդեցություն է ունենում: Համայնքապետարանի համար մեծ խնդիր է նաև հատկապես ձմռան ամիսներին ուժեղ քամիների հետևանքով հաճախակի հոսանքազրկումները, որը հանգեցնում է համայնքապետարանի աշխատանքների չպլանավորված դադարին և ազդում է սպասարկման որակի վրա: Էներգիայի ստացման այլ աղբյուրի առկայությունը հնարավորություն կընձեռնի բյուջեի միջոցների խնայողության, համայնքապետարանի աշխատանքների անխափան կազմակերպման, համայնքում սկիզբ կդրվի արևային էներգիայի մշակույթին, իսկ խնայված միջոցները կուղղվի զարգացման նոր ծրագրերի



իրագործմանը:
<p>Ծրագիրը որպես հիմնախնդրի լուծում կամ լուծմանն աջակցելու հնարավորություն:</p> <p>Արևային էներգիայի մշակույթի հիմնումը համայնքում և ծրագրի դրական միտումները խթան կհանդիսանան ընդլայնելու արևային համակարգերը և հետզհետե անցում կատարելու այդ եղանակով էներգիայի ստացմանը, որն էլ կհանգեցնի համայնքի բյուջեի խնայողության:</p> <p>Որքանով է ներկայացված առաջարկը համապատասխանում Միջոլորտային համագործակցությամբ դրամաշնորհային մրցույթի նպատակներին, առաջնահերթություններին, ինչպես նաև խնդրի առաջնահերթության համապատասխանությունը ՀՀ ոլորտային զարգացման տեսլականի հետ:</p> <p>Ներկայացված առաջարկը համապատասխանում է Միջոլորտային համագործակցության դրամաշնորհային մրցույթի «Համայնքային ենթակառուցվածքների բարենորոգում, հզորացում, համայնքային ծառայությունների որակի բարելավում՝ նորարարական լուծումների, էներգաարդյունավետ նորարարական համակարգերի ներդրման և բարելավման միջոցով» կետին:</p> <p>Ծրագրում ներառված գաղափարը վերհանվել է հանրային բաց լուծումների և քննարկումների ընթացքում և հաստատվել է համայնքի ավագանու կողմից, ներառված է համայնքի 2020 թվականի ՏԱՊ-ում:</p> <p>Ծրագիրը նպաստում է համայնքի բյուջեի խնայողությանը, համայնքային ենթակառուցվածքների բարեկարգմանը, հզորացմանը, համայնքային ծառայությունների որակի բարձրացմանը, նորարար է համայնքի համար թե՛ արևային համակարգը, և թե՛ բիզնես ոլորտի հետ համագործակցությունը:</p>

#### IV. Ծրագրի նկարագրություն

<p>1. Ծրագրի նպատակ. Համայնքի բյուջեի ծախսերի կրճատում, արևային էլեկտրաէներգիայի մշակույթի ձևավորում համայնքում:</p>
<p>2. Ծրագրի խնդիր/ներ/ը. 1. Էլեկտրաէներգիայի ստացման նորարար եղանակի կիրառում 2. Համայնքապետարանի ծառայությունների սպասարկման որակի բարելավում</p>
<p>3. Ծրագրի ակնկալվող արդյունքները, ցուցիչները. Ձևակերպել յուրաքանչյուր արդյունքի համար առնվազն մեկ չափելի ցուցիչ: Ցուցիչների միջոցով հնարավոր է լինելու գնահատել արդյունքների հասանելիությունն՝ ինչպիսին է լինելու ծրագրի ավարտից հետո փոփոխված իրականությունը: Ներկայացնել արդյունքները որպես իրականության ակնկալվող որակական փոփոխություն: Ցուցիչները կարտահայտեն ակնկալվող փոփոխության որակական, քանակական, ժամանակագրական բնութագրերը:</p> <ul style="list-style-type: none"> <li>• <u>U1. Սարչապետ համայնքում կիրառվում է էլեկտրաէներգիայի սրացման նորարար եղանակ</u> Ց1Ա1. 200 քմ արևային ֆոտովոլտային համայնքային կայանի առկայություն: Ց2Ա1. Տարեկան 17600 ԿՎՏ էլեկտրաէներգիա՝ առանց շրջակա միջավայրին վնաս հասցնելու: Ց3Ա1. Տարեկան 792 000 ՀՀ դրամի համայնքի բյուջեի խնայողություն:</li> <li>• <u>U2. Բարելավվել է համայնքապետարանի ծառայությունների սպասարկման որակը</u></li> </ul>

Տ1Ա2. Բնակիչներին համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայությունների որակը բարելավվել է՝15 %-ով:

4. Ծրագրի գլխավոր գործողություններ.  
Հերթականությամբ ձևակերպել գործողությունների շարքը, միջոցները, որոնք իրականացվելու են յուրաքանչյուր խնդրին հասնելու համար:
1. Էլեկտրաէներգիայի ստացման նորարար եղանակի կիրառում՝
- Գ1Ա1. Սարչապետի համայնքապետարանի կողմից ավագանու արատհերթ նիստի կազմակերպում ծրագրի ներդրման հաստատման համար,
  - Գ2Ա1. Ծրագրի մասնակցության համաձայնագրի կնքում հայտատուների միջև,
  - Գ3Ա1. Ծրագրի հաստատման պայմանագրի կնքում կողմերի միջև,
  - Գ4Ա1. Սարչապետի համայնքապետարանի կողմից անվճար տարածքի տրամադրում սեմինարների կազմակերպման համար,
  - Գ5Ա1. Հայտատու 2-ի կողմից սեմինարների իրականացում,
  - Գ6Ա1. Համակարգի կառուցման համար համայնքային տարածքի տրամադրում,
  - Գ7Ա1. Պայմանագրի կնքում գնումների մասնագետի հետ,
  - Գ8Ա1. Գնումների ընթացակարգերի կազմակերպման վերահսկում,
  - Գ9Ա1. Արևային համակարգի կառուցման աշխատանքների կազմակերպում,
  - Գ10Ա1. Արևային համակարգի շահագործման փորձարկում,
  - Գ11Ա1. Աշխատանքների հանձնում ընդունում:
2. Համայնքապետարանի ծառայությունների սպասարկման որակի բարելավվում՝
- Գ1Ա2. Համայնքապետարանի անխափան աշխատանքների կազմակերպում:
  - Գ2Ա2. Բնակիչների շրջանում իրազեկության բարձրացում ՏԻՄ ծառայությունների վերաբերյալ

5. Ծրագրի թիրախ խումբը.  
Սահմանել թիրախային խումբը կամ խմբերը՝ վերջնական շահառուներին, նրանց քանակը, սոցիալական բնութագրերը և ընտրության չափորոշիչներն ու մեխանիզմները: Նկարագրել միջամտության տրամաբանությունը, թե ինչպես են նախատեսված գործողությունները բարելավելու թիրախ խմբի դրությունը:
- Ծրագրի շահառուներ են հանդիսանում Սարչապետ համայնքի թվով 6021 բնակիչները, համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայություններից օգտվող բոլոր բնակիչները, համայնքապետարանի աշխատակազմը:

6. Ծրագրի գործընկերները.  
Սահմանել ծրագրի հայտատուների հիմնական դերն ու պատասխանատվության շրջանակը, նախկինում համագործակցության փորձը: Ներկայացնել, թե ում նախաձեռնությամբ է ձևավորվել տվյալ գործընկերությունը, ինչ կտա այն հայտատուներից յուրաքանչյուրին: Նկարագրել, թե ծրագրի որ բաղադրիչների համար են պատասխանատու հայտատուներից յուրաքանչյուրը:  
*Եթե նախատեսված է ծրագրի շրջանակներում այլ կառույցների հետ համագործակցություն, ապա այն նույնպես նկարագրել:*
- Ծրագրի ներկայացումը և համագործակցությունը իրականացվել է Սարչապետ համայնքի ՏԻՄ մարմինների նախաձեռնությամբ: Սարչապետի համայնքապետարանը ունի համարելի իրականացված ծրագրեր Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ-ի /արտավարների բարելավում, անասնաբուժական կետերի հիմնում, 2020թ. նույնպես նախատեսված է ծրագիր/, Վորլդ Վիժն /մանկապարտեզի հիմնում, ամառային ճամբարներ, երիտասարդական ակումբներ/, բարերարների հետ համարելի /գրեյդերի ձեռքբերում, հուշակոթողի հրապարակի կառուցում, համայնքի կենտրոնի բարեկարգում/: Հայտարարու 1-ի դերը՝ ծրագրի ներկայացում, ծրագրի իրականացման կազմակերպչական աշխատանքների իրականացում: Հայտարարու 2-ի դերը՝ արևային էներգիայի մշակույթի փարածում համայնքում, արևային համակարգի կառուցում և շահագործման կազմակերպում: Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն <<էկո Վիլ>> կազմակերպության հետ: Համագործակցությունը հնարավորություն կընձեռնի նորարար գործելաոճի՝ համայնքի և քիզնես ոլորտի համար: Կրնդայնի երկու կողմերի հնարավորությունները:*

7. Ծրագրի մեթոդաբանությունը.

Նկարագրել, հիմնավորել իրականացման մեթոդները՝ ներառյալ միջոցառումների կազմակերպումը, գույքի, սարքավորումների, պարագաների, նյութերի ձեռքբերումը և այլ գնումները, յուրաքանչյուր կետի համար նշելով, թե ծրագրի հայտատուներից որոնք են պատասխանատու տվյալ գործողության համար.

Մեթոդ	Պատասխանատու	Ժամանակահատված	Հակիրճ նկարագրություն
Ծրագրի համակարգողի նշանակում	Սարչապետի համայնքապետարան	Մայիս-դեկտեմբեր	Իրականացնում է ծրագրի ընդհանուր փաստաթղթավորումը
Գնումների մասնագետի հետ պայմանագրի կնքում	Սարչապետի համայնքապետարան	Հունիս-հուլիս	Կազմակերպում է գնումների ընթացակարգը
Ֆինանսական պարասխանապուհի նշանակում	Սարչապետի համայնքապետարան	Մայիս-դեկտեմբեր	Իրականացնում է ֆինանսական գործընթացներ
Հայտարարումների միջև հանդիպումների կազմակերպում	Սարչապետի համայնքապետարան	Մայիս-դեկտեմբեր	փաստաթղթերի ստորագրում, փաթեթի կազմում
Արևային էներգիայի համակարգի մասնագետի ներգրավում	<<ԷՅՋ ԴԻ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ	Մայիս-դեկտեմբեր	Համակարգի տեղադրման փարածքի գնահատում, մասնագիտական խորհրդատվություն
Նախագիծ-նախահաշվի պատվիրում	Սարչապետի համայնքապետարան	Հունիս-հուլիս	Շիրարարական աշխատանքների կազմակերպման և բյուջեի տնօրինման համար
Դասընթացավարի ներգրավում և դասընթացների կազմակերպում	<<ԷՅՋ ԴԻ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ	Հունիս-հուլիս	Արևային էներգիայի մշակույթի փարածման և բնակիչների բյուջեի ճիշտ կառավարման իրազեկում
Գրենական պարագաների ձեռքբերում	<<ԷՅՋ ԴԻ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ	Հունիս-հուլիս	Գրիչ, նոթապետի և այլն
Ֆլայեռների և բուկլետների պատվիրում	<<ԷՅՋ ԴԻ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ	Հունիս-հուլիս	Արևային էներգիայի վերաբերյալ տեղեկատվության փարածում
Արևային համակարգի կառուցման աշխատանքների կազմակերպում	Սարչապետի համայնքապետարան <<ԷՅՋ ԴԻ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ	Հունիս-դեկտեմբեր	Շինարարական աշխատանքների իրականացում

8. Ծրագրի տևողությունը՝ ամիսների քանակը.

Սահմանել ծրագրի հիմնական փուլերի ժամանակագրությունը:

Համաձայնագրի և ֆինանսական և ոչ ֆինանսական ներդրման փաստաթղթերի հաստատում-1-

<p><i>ին ամիս, Ծրագրի հաստատման պայմանագրի կնքում-1-ին ամիս, Արևային էներգիայի մշակույթի տարածում համայնքում-1 -2-րդ ամիսներին, Գնումների կազմակերպում-2-3-րդ ամիսներ, Համակարգի կառուցում-3-6-րդ ամիսներ, Համակարգի շահագործում, ընդունում-հանձնում-6-8-րդ ամիսներ:</i></p>
<p>9. Ծրագրի վերահսկումը և մոնիթորինգը. Նկարագրել, թե ինչպես է չափվելու ծրագրի ազդեցությունն իրականացման ընթացքում և նրա ավարտին: Ներկայացնել ծրագրի մոնիթորինգի անցկացման պարբերականությունը, պատասխանատու անձանց և տվյալների հավաքագրման մեխանիզմները:</p> <p><i>Ծրագրի մոնիթորինգը կիրականացվի եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ համայնքի բյուջեի ծախսային մասի հաշվետվությունների միջոցով, ծրագրի վերահսկումը՝ համայնքապետարանի աշխատակազմի և ավագանու անդամների կողմից: Տվյալների հավաքագրման համար հիմք կհանդիսանան համայնքապետարանի կողմից ծախսված էլեկտրաէներգիայի փոխադարձ հաշվարկների ստուգման ակտերը:</i></p>
<p>10. Ծրագրի կայունությունը. Ներկայացնել ծրագրի շահագործումը և պահպանումն արդյունավետության ապահովման համար, նկարագրել այն մեխանիզմը, որը երաշխավորելու է տեղի ունենալիք փոփոխության կայունությունը ծրագրի ավարտից հետո: Նկարագրել, թե համայնքում ովքեր են պատասխանատու լինելու ծրագրի հետագա շահագործման համար: Եթե ծրագիրն ունի գործարար բաղադրիչ, ապա նկարագրել կիրառվելիք այն բիզնես մեխանիզմը, որն ապահովելու է համայնքում տնտեսական գործունեության շահավետության աճը և սոցիալական պատասխանատվության բարձրացումը:</p> <p>Համայնքը կունենա համայնքային սեփականության արևային ֆոտովոլտային կայան՝ 25 տարի արտադրողականության երաշխիքով, 12 տարի արևային վահանակների սպասարկման երաշխիքով, 5 տարի ինվերտորի սպասարկման երաշխիքով: Համայնքապետարանը իր ողջ գործունեության ընթացքում կստանձնի կայանի անխափան աշխատանքների վերահսկողությունը:</p>
<p>11. Ծրագրի շարունակականությունը, զարգացումը. <i>Ինչպիսին է լինելու ծրագրի ավարտից հետո հետագա ընթացքը, ինչպիսի նախաձեռնություններ կարող են հաջորդել ծրագրին:</i></p> <p><i>Ծրագրի արդյունավետության մոնիթորինգ անցկացնելուց և պրակտիկայում կիրառելուց հետո, համայնքապետարանը նախատեսում է լիովին անցում կատարել արևային էներգիային, ծրագրի ընդլայնումը նախատեսվում է թվով ութ բնակավայրերում՝ համայնքի կողմից մատուցվող գիշերային լուսավորության սպասարկման և համայնքապետարանի գործունեության ապահովման համար:</i></p>
<p>12. Ծրագրի գաղափարի նորարական լինելը. <i>Նկարագրել, թե որքանով է գաղափարը նորարարական. ինչպիսի նորարական լուծումներ է այն առաջարկում համայնքում/բնակավայրում այս կամ այն խնդրի լուծման համար:</i></p> <p>Ծրագիրը համայնքի համար նորարար է քանի որ, Սարչապետ համայնքի Սարչապետ բնակավայրում կկառուցվի առաջին արևային ֆոտովոլտային կայանը, ինչպես նաև էլեկտրաէներգիայի ստացման նոր աղբյուր է: Նորար է նաև համայնք-բիզնես ոլորտ համագործակցությունը, որը կարող է դառնալ հետագա շահավետ աշատելաձև:</p>

**V. Հավելվածներ.**  
Հավելված 1. Տրամաբանական հենք

Հավելված 2. Աշխատանքային պլան (Գանտի աղյուսակ)

Հավելված 3. Բյուջե

Հավելված 4. Միավորված/ սահմանամերձ համայնքի կամ բնակավայրերի կարիքների գնահատման արդյունքների մասին տեղեկատվական կամ հետազոտական նյութեր:

Հավելված 5. Ծրագիրն իրականացնող հայտատու կազմակերպությունների պաշտոնատար անձանց կողմից համաձայնագիր-հաստատում ծրագրի իրականացման համագործակցության վերաբերյալ:

Հավելված 6. Հայտատուների կողմից ծրագրում սեփական ներդրումների չափը և ժամկետները հաստատող որոշումները և փաստաթղթերը:

### ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔ

#### Գործողությունների պլանավորում

	Համառոտ նկարագրություն	Օբյեկտիվորեն ստուգվող ցուցիչներ	Ստուգման աղբյուրներ	Վարկածներ/ Ռիսկի գործոններ
<b>Ծրագրի վերջնանպատակ</b>	Աբողջությամբ արևային էներգիայով գործառնող համայնք			
<b>Ծրագրի նպատակ</b>	Համայնքի բյուջեի ծախսերի կրճատում, արևային էլեկտրաէներգիայի մշակույթի ձևավորում համայնքում	Համայնքի բյուջեի տարեկան խնայողություն 792 000 ՀՀ դրամ Տարեկան արտադրված արևային էներգիա	Համայնքի բյուջեի ծախսային հաշվետվություն Արևային համակարգի ցուցիչներ	

		17 600 ԿՎՏ		
--	--	------------	--	--

	<b>Համառոտ նկարագրություն</b>	<b>Օբյեկտիվորեն ստուգվող ցուցիչներ</b>	<b>Ստուգման աղբյուրներ</b>
<b>Արդյունք 1</b>	Սարչապետ համայնքում կիրառվում է էլեկտրաէներգիայի ստացման նորարար եղանակ	1.200 քմ արևային ֆոտովոլտային համայնքային կայանի առկայություն:  2.Տարեկան 17600 ԿՎՏ էլեկտրաէներգիա՝ առանց շրջակա միջավայրին վնաս հասցնելու:  3.Տարեկան 792 000 ՀՀ դրամի համայնքի բյուջեի խնայողություն:	1.Համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգ  2.Արևային համակարգի ցուցիչներ  3.Համայնքի բյուջեի ծախսային մասի հաշվետվություն
<b>Արդյունք 2</b>	Բնակիչներին համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայությունների որակը բարելավվել է	Ծրագրի ավարտին ծառայությունների մատուցման որակը աճել է 15 %-ով:	Օնլայն հարցումներ
<b>Խնդիր 1.</b>	Էլեկտրաէներգիայի ստացման նորարար եղանակի կիրառում		
<b>Ա1.Գ1.</b>	Ավագանու նիստի կազմակերպում	Ծրագրի առաջին ամսում մեկ ավագանու որոշում	Նիստի արձանագրություն
<b>Ա1.Գ2.</b>	Համաձայնագրի կնքում հայտատուների միջև	Ծրագրի առաջին ամսում առկա է համաձայնագիր	Համաձայնագրի կրկնօրինակ
<b>Ա1.Գ3.</b>	Ծրագրի հաստատման պայմանագրի կնքում	Ծրագրի երկրորդ ամսում առկա է ծրագրի հաստատման պայմանագիր	Պայմանագրի բնօրինակ
<b>Ա1.Գ4.</b>	Տարածքի տրամադրում սեմինարների	Ծրագրի 2-3-րդ ամիսներին 8 օրվա	Սեմինարների լուսանկարներ

	կազմակերպման համար	սեմինարների անցկացման համար առկա է համապատասխան համայնքային տարածք	
<b>Ա1.95.</b>	Սեմինարների իրականացում	8 սեմինար	Մասնակցության թերթիկներ
<b>Ա1.96.</b>	Համակարգի կառուցման համար տարածքի տրամադրում	Առկա է համայնքային տարածք 150-200քմ	Նախագծման փաստաթղթեր, սեփականության վկայական
<b>Ա1.97.</b>	Պայմանագրի կնքում գնումների մասնագետի հետ	Առկա է 1 ծառայությունների մատուցման պայմանագիր	Պայմանագրի բնօրինակ
<b>Ա1.98.</b>	Գնումների ընթացակարգերի կազմակերպման վերահսկում	Գնումների հայտարարության առկայություն	Գնումների փաթեթ, էլեկտրոնային հարթակ
<b>Ա1.99.</b>	Արևային համակարգի կառուցման աշխատանքների կազմակերպում	Ընթանում է համակարգի շիանարարկան աշխատանքներ	Լուսանկարներ, համակարգի առկայություն
<b>Ա1.910.</b>	Արևային համակարգի շահագործման փորձարկում	Ստացված էլեկտրաէներգիայի օգտագործում	Համակարգի ցուցիչներ
<b>Ա1.911.</b>	Աշխատանքների հանձնում ընդունում	Առկա է հանձնման-ընդունման ակտ	Ակտի բնօրինակ
<b>Խնդիր 2.</b>	Համայնքապետարանի ծառայությունների սպասարկման որակի բարելավվում		
<b>Ա2.91.</b>	Համայնքապետարանի անխափան աշխատանքների կազմակերպում	Բնակիչների սպասարկման արագություն	Դիմումների պատասխանների ժամանակահատված
<b>Ա2.92</b>	Բնակիչների շրջանում իրազեկության բարձրացում ՏԻՄ ծառայությունների վերաբերյալ	Համայնքային կայքերի հետևորդների թվի աճ	Համայնքային համացանցային կայքեր

<b>Ընդամենը</b>			
-----------------	--	--	--

Ներկայացման ամսաթիվ 18.05. 2020 թ.

Հայտատու 1.Սարչապետի համայնքապետարան

Պաշտոնատար անձ.Սարչապետ համայնքի ղեկավար՝ Բորիս Բարոյան

Ստորագրություն. \_\_\_\_\_

Կ.Տ.

Հայտատու 2.<<ԷՅՋ ԴԻ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ

Պաշտոնատար անձ. Տնօրեն՝Հարություն Դանիելյան

Ստորագրություն. \_\_\_\_\_

Կ.Տ.

## ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ (ԳԱՆՏԻ ԱՂՅՈՒՍԱԿ)

Հայտատու կազմակերպություններ	Սարչապետի համայնքապետարան, <<ԷՅՋ ԴԻ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ
Ծրագիր-առաջարկի անվանումը	Արևային ֆոտովոլտային կայանի կառուցում
Ժամկետ	3-8 ամիս







	պում																
Ա2.Գ 2	Բնակիչների շրջանում իրազեկության բարձրացում ՏԻՄ ծառայությունների վերաբերյալ	Սարչապետի համայնքապետարանի աշխատակազմ	Սարչապետի համայնքապետարան														

Ներկայացման ամսաթիվ 18.05.2020 թ.

Հայտատու 1. Սարչապետի համայնքապետարան

Պաշտոնատար անձ. Սարչապետ համայնքի ղեկավար՝ Բորիս Բարոյան

Ստորագրություն. \_\_\_\_\_

Կ.Տ.

Հայտատու 2. <<ԷՅՋ ԴԻ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ

Պաշտոնատար անձ. տնօրեն՝ Հարություն Դանիելյան

Ստորագրություն. \_\_\_\_\_

Կ.Տ.

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ  
ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻՑ ԵՎ  
ԽՈՏՀԱՐՔԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՎՃԱՐԻ  
ՉԱՓԸ ԵՎ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԺԵԼԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի  
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի  
Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 1477-Ն  
որոշումով՝

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Սարչապետ համայնքի սեփականություն հանդիսացող արտավայրերից և  
խոտհարքերից օգտվելու վճարի չափը սահմանել տվյալ խոտհարքի և արտավայրի  
տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար՝ համաձայն  
հավելվածի:

2. Համայնքի ղեկավարին՝ իրականացնել համայնքային սեփականության  
արտավայրերի և խոտհարքերի տրամադրումը, կնքել պարզ գրավոր պայմանագրեր՝  
մինչև երեք տարի ժամկետով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ  
ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

Օգտագործման տրամադրվող խոտհարքներին և արոտավայրերին 1 հեկտարի համարսահմանվող վճարները .

Արոտավայրերին համար՝

I կարգ -8280 ՀՀ դրամ ,

II կարգ -6435 ՀՀ դրամ ,

III կարգ -4590 ՀՀ դրամ ,

IV կարգ -2760 ՀՀ դրամ ,

V կարգ -915 ՀՀ դրամ :

Խոտհարքերին համար՝

I կարգ - 8790 ՀՀ դրամ ,

II կարգ - 6840 ՀՀ դրամ ,

III կարգ - 4890 ՀՀ դրամ ,

IV կարգ -2925 ՀՀ դրամ ,

V կարգ - 975 ՀՀ դրամ :